*Հավելված 1*

**Աջակցություն Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին հեղինակային կրթական ծրագրերի իրականացման համար**
**Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում.**
**հեղինակային կրթական ծրագրերի վերամշակում և իրականացում. անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ. ստեղծագործ անհատի կրթական պատվերի իրականացում:**

2026թ. հունվար-հունիս

1. **«Ստեղծողի մոբիլ դպրոց: Ստեղծագործ անհատի կրթական պատվեր**, **անհատի օժտվածության զարգացման հանրակրթական բաց համակարգ»** (**այսուհետ՝ բլեյան դպրոց**) **հեղինակային հանրակրթական** (**հիմնական և լրացուցիչ**) **ծրագրերի**, **այդ թվում՝ նաև նախադպրոցական**, **գիտափորձերի մշակման** (**լրամշակման**) **բաց համակարգ**

Հեղինակային մանկավարժության լաբորատորիայի, մանկավարժության կենտրոնի, մասնագիտական խմբերի, կրթահամալիրի մասնաժողովի գործունեություն, «Դպիր» մանկավարժական հանդեսի հրապարակում:
Ծրագրի 2026թ. աշխատանքների ներկայացում ՀՀ ԿԳՄՍՆ՝ որպես պետական դրամաշնորհային պայմանագրի հավելված: ԿԳՄՍՆ 2027-2029թթ ՄԺԾԾ հայտում ծրագրի ընդարձակման առաջարկի մշակում, քննարկում դպրոցներում, մասնախմբերում, ներկայացում ԿԳՄՍՆ: Կրթահամալիրի զարգացման ծրագրի, հավելվածների լրամշակում, հաստատում:
Հեղինակային հանրակրթական ծրագրերի բովանդակության, կազմակերպման, տարածման նախագծերի մշակումներ, հուլիս-սեպտեմբերի աշխատանքների համար մշակումների (լրամշակման) կազմակերպում: Բազային կրթության դպրոց-պարտեզ (2-4 տարեկաններ, 5 տարեկաններ, 1-6-րդ դասարաններ),

տեխնոլոգիական հանրակրթության միջին դպրոց (7-8-րդ, 9-րդ դասարաններ), հետազոտական վարժարան ավագ դպրոց ծրագրերի լրամշակում:

Նախադպրոցական ծրագրի դաստիարակների լաբորատորիայում 2-4, 5-6 տարեկանների գործունեության նախագծերի մշակում ըստ շրջանների:

2025-2026 ուսումնական տարվա հունվար-հունիսի, հանրակրթական բնագիտատեխնիկական ստեղծագործության, «Հանրակրթական Դիջիտեք», մարմնամարզական, ձմեռային մարզական խաղերի, ազգագրական, արտադրությամբ ուսուցման, ընթերցողական, տեխնոլոգիական «Ձոն», հասարակագիտական ստուգատեսների, ազգագրական ամենամյա ձմեռային փառատոների, Հանրակրթական էկոտուրի, քոլեջում մասնագիտական կրթության ուսանողական բաց գիտաժողովի, հունվարյան, հունիսյան դպրոց-ճամբարների, ջոկատների աշխատակարգերի, Հեղինակային ծրագրի մայիսյան ամենամյա 21-րդ ստեղծագործական հավաքի, Արատեսի դպրական կենտրոնում՝ ձմեռային, գարնանային, ամառային, Արտանիշի վրանային ճամբարում հայրենագիտական-նախագծային, ստեղծագործական ճամբարների, բաց հավաքների, ճամբարների ուղեցույցների, օրացույցների մշակում-լրամշակում, կազմակերպում:

2026-ի ուսումնական երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ շրջանների կազմակերպման, «Ուսումնական գարուն», «Ուսումնական ամառ» արձակուրդային շրջանի, մանկավարժական նորարարական գարնանային, հունիսյան ճամբարների կազմակերպման ուղեցույցներ, 1-12-րդ դասարանցիների, դասավանդողների անհատական պլաններ ըստ շրջանների: 2026-2027թթ ուսումնական տարվա համար հանրակրթական ծրագրերի ուսումնական պլաններում փոփոխությունների, նոր դասընթացների առաջարկներ, ուսումնական պլանով որոշված կարգերի մշակումներ: Ուսումնական հինգերորդ շրջանի նախագծում՝ որպես սովորողի լրացուցիչ կրթություն՝ քաղաքային լողափնյա, Արատեսի, Արտանիշի վրանային, գյուղական ճամբարներով, անհատական, խմբային կրթական նախաձեռնություններով, նախագծերով, ճամփորդություններով:

Հեղինակային ծրագրի ուսումնական պլանով որոշված, սահմանված կարգով, հաստատված ժամանակացույցով Ավագ դպրոցում սովորողների

հետազոտական աշխատանքների հանրային ներկայացում (պաշտպանություն), քոլեջում՝ դիպլոմային նախագծերի հանրային ներկայացում: Հետազոտական աշխատանքների կազմակերպման մեջ հանրապետության գիտական, կրթական, մշակութային կազմակերպությունննների մասնագետների ներգրավում, աշխատանքների ներկայացում նաև ըստ նախագծերի բովանդակության ընտրված կազմակերպություններում: 2026-2027 ուսումնական տարվա նախագծերի պատրաստություն, 2026-2027 ուսումնական տարվա հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջների, կազմակերպման կարգի, հետազոտական աշխատանքի ուղեցույցի լրամշակման առաջարկների ձևակերպում, քննարկումներ, նախագծերի պատրաստություն: «Դպիր» ամսագրի պատանեկան հավելվածի՝ հետազոտական աշխատանքների ալմանախի հրապարակումներ:

2025-2026 ուսումնական տարվա 1-4-րդ շրջանների ամփոփման՝ զարգացման բնութագրերի, ուսումնական աշխատանքի արդյունքների գնահատման գործիքների մշակում, կազմակերպում, 5-րդ շրջանի արդյունքների ամփոփման նախագծում:

2026-2027 ուսումնական տարվա սովորողների ընդունելության, այդ թվում՝ նաև «Մուտք հետազոտական վարժարան», «Մուտք քոլեջ» կարգերի լրամշակում, կարգերի կազմակերպման նախագծերի, աշխատարանների ծրագրերի մշակում: Շուրջտարյա ընդունելության բաց համակարգով կրթահամալիրի դպրոց-պարտեզներում, միջին, ավագ դպրոցում «Մուտք կրթահամալիր» ճամբարների ծրագրում, կազմակերպում, 2026-2027 ուստարվա առաջին դասարանցիների ընդունելության կարգով մուտքի ճամբարների ծրագրում, կազմակերպում չորս դպրոց-պարտեզներում, Ավագ դպրոցում 10-րդ դասարան դիմողների հուլիսյան աշխատարանների ծրագրում, քոլեջում մասնագիտական կրթական ծրագրերի ներկայացման նախագծերի մշակում, աշխատարանների մայիս-հունիսյան փուլերի կազմակերպում: 2025-2026 ուսումնական տարվա 5 տարեկանների նախադպրոցական խմբերի սաների անցումը տարրական կրթական ծրագիր. արդյունքների ամփոփման մշակում, կազմակերպում:

Նախադպրոցականի գործունեության արդյունքների ներկայացման հունվար-հունիսի «Ամսիկ» ստուգատեսների ծրագրերի մշակում, կազմակերպում դպրոց-պարտեզներում, քոլեջ-պարտեզում:
Ամենօրյա ընդհանուր պարապմունք վեց դպրոցներում, քոլեջում, ընդհանուր պարապմունքի ամենշաբաթյա ֆլեշմոբ կրթահամալիրի մասնաճյուղ դպրոցներում, ամենշաբաթյա ուրբաթ-համերգ ընդհանուր պարապմունքի, Սուրբ Երրորդություն եկեղեցում ամենշաբաթյա, հայաստանյան այլ եկեղեցիներում ըստ նախագծերի ուսումնական ժամերգություն: Ամենամսյա առարկայական ֆլեշմոբների առաջադրանքների փաթեթների մշակում: «Իմացումի հրճվանք» ծրագրի սովորողին առաջարկվող բնագիտական փորձերի փաթեթների ստեղծում:

Արտադրությամբ ուսուցման, տոների-տոնավաճառ-հանգանակության նախագծեր, ցուցահանդեսներ, «Ձոն» ստուգատեսի ամփոփման, զատկական ծեսի, մայիսյան հավաքի, ուսումնական տարվա ամփոփիչ ցուցադրություն-համերգ-տոնավաճառների ծրագրում և կազմակերպում:

Հետազոտական վարժարանում, քոլեջում սովորողների կամավորական աշխատանքի կազմակերպում: Սովորող սովորեցնող նախագծի զարգացում նոր ուղղությունների ներգրավմամբ. նախագծի մասնակիցների անհատական արդյունքների գրանցում, կլոր սեղաններ. նախագծային խմբերի ներկայացում: «Հարթակում գործիչն է», «Հարթակում ծնողն է», «Հարթակում շրջանավարտն է», «Մեր ժամանակակիցները» նախագծերով, ստուգատեսների, փառատոների ծրագրերով հանդիպում-պարապմունքներ ՏՏ-ճարտարագիտական, քաղաքական-հասարակական, գրական ոլորտների հայաստանցի և արտասահմանցի մասնագետների հետ, տարատարիք բաց աշխատարանների նախագծեր, սովորողների, դասավանդողների, ծնողների ներառում տարբեր բաց պարապմունքներում՝ դիտարկելով դրանք որպես անհատի ինքնակրթության, հետաքրքրությունների բացահայտման հնարավորություն, սովորողի մասնագիտական կողմնորոշման բաց նախագծեր, մասնագիտական ներդրում կրթական ծրագրում՝ դասընթացի, ուսումնական պարապմունքների վարում, ուսումնական նախագծերի ղեկավարում, հետազոտական աշխատանքների

խորհրդատվություն, գրախոսություն. հանդիպումներ կրթահամալիրի դպրոցներում:
Արհեստական բանականությունն ուսումնական գործընթացում. մշակումներ, այդ թվում՝ ԱԲ-ից օգտվելու՝ սովորողի, ուսուցչի փորձի կարևորում, փոխանցում, ԱԲ-ով ուսումնական նախագծեր:
Ինտելեկտուալ մրցաշարերի նախագծում և կազմակերպում սովորողների տարբեր խմբերի հետ՝ անհատական, խմբային տարբեր ձևաչափերի մրցաշարերի փորձարկում, կազմակերպում, այդ թվում՝ նաև մանկավարժական:

Կրթահամալիրի ամենամյա «Հակոբ Հակոբյան», «Տիգրան Հայրապետյան», «Աիդա Պետրոսյան», «Իմացումի հրճվանք», «Հեղինակային կրթական ծրագրի հեղինակ», անվանական մրցանակների պահանջների լրամշակում, մրցանակային աշխատանքների հրապարակում, մրցանակաբաշխության կազմակերպում:
«Դպիր» մանկավարժական հանդեսում հեղինակային փորձի, մանկավարժական մոտեցումների ներկայացում, մանկավարժական գրականության թարգմանություն (73 հրապարակում), օտարալեզու «Դպիրի» գործունեություն:

Հեղինակային մանկավարժության լաբորատորիայի, մանկավարժության կենտրոնի, բազմալեզու կայքի, mskh.am ցանցի (դպրոցների, ուսումնական կենտրոնների, մասնախմբերի, լաբորատորիաների ենթակայքերի), մեդիագրադարանի, դասավանդողների, սովորողների, ստեղծագործական խմբերի բլոգների անընդհատ-անխափան գործունեություն: Մանկավարժական աշխատողների՝ մասնագիտական հմտությունների զարգացմանն ուղղված ամենշաբաթյա հավաքների, կլոր սեղան-քննարկումների, ակումբների, աշխատարանների, համակարգչային նոր ծրագրերի յուրացման դասընթացների մշակում և կազմակերպում: Բլեյան դպրոցի վերապատրաստումների նոր մոդուլների մշակում, փորձարկում:
Բլեյան դպրոցի ֆիզիկական բաց միջավայրի խնդիրների ձևակերպում. բարեկարգման նախագծեր, հուլիս-օգոստոսի աշխատանքների նախագծում:
Ուսումնական նախագծերի մշակման, կազմակերպման համար համագործակցություն «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի, կրթահամալիրի աշխատողների արհեստակցական կազմակերպության,

պետական և հասարակական կազմակերպությունների, մասնագետ անհատների հետ: «Սեբաստացիներ» հիմնադրամի միջոցով ԱՄՆ-ից, Եվրոպական տարբեր երկրներից կամավորների ներգրավում ուսումնական նախագծերում, ամառային մանկավարժական ճամբարում:

Կրթահամալիրի կառավարման խորհրդի սպասարկում՝ տնօրենի ընտրության կարգի, տնօրենի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի լրամշակումներ, տնօրենի ներկայացրած նյութերի, ծրագրերի քննարկումների կազմակերպում: Դպրոցական առողջ սննդի միասնական կազմակերպման, հացի արտադրության, ծիսական խոհանոցի կազմակերպման նախագծեր:

Կրթահամալիրի ֆինանսավորման խնդրի առնչությամբ ՀՀ 2026թ. բյուջեի, ուսումնական հաստատությունների ֆինանսավորման կարգի, բանաձևի, բյուջեի կատարման, բյուջեից սուբսիդիայի հատկացման, կրթահամալիրի ստեղծման և գործունեության պատմության, կրթահամալիր ՊՈԱԿ-ի 2003-20025թթ ֆինանսավորման վերաբերյալ ուսումնասիրություններ կրթահամալիրի ուսումնական հաստատություններում, մասնախմբերում, կրթական համայնքի, կրթահամալիրի դիրքորոշման ձևակերպում: Կրթահամալիրի հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ՀՀ բյուջեից 2026թ. ֆինանսավորման հայտերի մշակում, ներկայացում կրթահամալիրի կառավարման խորհրդին, վերջինիս հաստատմամբ՝ ԿԳՄՍՆ: Խնդրի քննարկումներ դպրոցների, քոլեջի մանկավարժական, ծնողական խորհուրդներում, կրթական բաց համայնքում, ծնողական համայնքի տարբեր խմբերի հետ, հանրակրթական դպրոցների սովորողների, մասնագիտական աջակցության նպատակով ձևավորված ծնողական խմբերի հետ:

Մանկավարժության լաբորատորիայի համակարգմամբ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում նախագծերի քննարկման մասնակցություն, այդ թվում՝ նաև հանրակրթական պետական չափորոշչում փոփոխությունների, կրթահամալիրի մասնաճյուղերի պետական հաշվառման, մասնագիտական կրթական ծրագրերի համար պետական ֆինանսավորման կարգի:

2. **Նախադպրոցական հեղինակային կրթական ծրագրի կազմակերպում**

Կրթահամալիրի հինգ մասնաճյուղերում 2-4 տարեկանների 11 խմբի գործունեություն: 5-6 տարեկանների 6 խմբերի դաստիարակների մասնակցություն նախադպրոցական ծրագրի լաբորատորիայում մշակումներին:

Ծրագրի ուսումնական օրացույց՝ ամսական, շաբաթական նախագծերով, «**Ձմեռային պարտեզ**», «**Գարնանային պարտեզ**», «**Ամառային լողափնյա պարտեզ**»: Ուսումնական նյութեր, մշակումներ, մեթոդական ուղեցույցներ, նախակրթարանի ծեսերի փաթեթ, դաստիարակի, դաստիարակի օգնականի, երաժշտության դաստիարակի 45 բլոգ, կրթական ծրագրի մշակում-լուսաբանում բլոգներով, սոցցանցի խմբերով: Մասնագիտական զարգացման աշխատանքների նախագծում և լուսաբանում դաստիարակների լաբորատորիայի բլոգում, ծրագրային-մեթոդական նյութերի փաթեթների ստեղծում: «Մայրիկի, դաստիարակի օրագիր» նախագիծը՝ որպես ինքնակրթության նախագիծ: Դաստիարակների լաբորատորիայի ամենշաբաթյա պարապմունքներ՝ մարզական, երաժշտական-ծիսական, կավագործության, հոգեբանության, առաջին բուժօգնության, մայրենիի, թատերական, լուսանկարչության, մեդիահմտությունների զարգացման պարապմունքներ, Խաղային լաբորատորիա. ճվիկներ, թռնոցիներ և հաշվերգեր: Դաստիարակների «Նռանե» երգի-պարի խումբ, դաստաիարակների ճամփորդության, մարզական քայլքի նախագծեր, ծնողական սեմինարներ, ակումբներ: Ծրագրի սաների, ծնողների մասնակցություն կրթահամալիրային տոներին, ծեսերին, ստուգատեսներին՝ սաների համար կազմված նախագծերով, այդ թվում՝ Ծննդյան ծես, «Խաղում ենք, կարդում ենք, երգում ենք, նվիրում ենք Թումանյան», «Աղայան-Ռոդարի», մարմնամարզական, բակերի գարնանային, սերմնացան-ծաղկանոց-ծառատունկի, «Հայրիկատոն», «Երաժշտական պատ», Դդմածես, Ղափամայի համայնքային ծես, Բուն բարեկենդան, «Ձոն մայրիկի» ստուգատես- ցուցահանդես, Ծաղկազարդ-ծառզարդար, Սուրբ Հարության տոն, Մայիսյան 21-րդ ամենամյա հավաք, Համբարձման ծես, «Մեր տոնը բարձունքին», Կոմիտասյան պատվաստ + մանուկների տոն, «Բա՛րև, ջուր», Ծիրանածես: Շուրջտարյա այլ նախագծեր՝ «Հակաբացիլ Կոմիտաս», ընթերցողական, հեքիաթասացի, Ուսումնական ագարակում իրականացվող նախագծեր: «Իմացումի հրճվանք» ծրագրի

կրտսերների՝ 5-6 տարեկանների ամենամյա «Ամսիկ» ստուգատեսի հաշվետու ներկայացումներ ստուգատեսի օրացույցով:

«Սեբաստացիներ» հիմնադրամի աջակցությամբ՝ պարտեզային խմբերում տեխնոլոգիական, խոսքային գործունեության միջավայրի նորացում: Նոր մարզասրահ 2-4 տարեկանների համար՝ մարմնակրթության համար անհրաժեշտ գործիքներով:

Նախակրթարանի ծրագրերը, նախագծերը՝ ծրագրի լաբորատորիայում:

3. **Սովորողների**, **մանկավարժական աշխատողների օժտվածության զարգացման բաց համակարգի պահպանություն:**

Լրացուցիչ, այդ թվում՝ արտադպրոցական կրթական ծրագրերի կազմակերպիչ ուսումնական կենտրոնների, սովորողների, մանկավարժական աշխատողների օժտվածության զարգացման բաց համակարգի պահպանություն, տարածում:

Կրթահամալիրի մարզադպրոցում 5-12-րդ դասարանցիների, քոլեջի սովորողների ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, ձեռքի գնդակի, թենիսի, հրաձգության, սուսերամարտի, մենամարտական մարզաձևերի, մարմնամարզական ակումբների գործունեություն, բաց մրցաշարեր, լրացուցիչ կրթության պարապմունքներ: Մարզական բաց, ամենամյա մրցաշարեր՝ ձմեռային մարզական խաղեր Հայաստանի ձնառատ շրջաններում, սահադաշտերում, բակերում, ուսուցիչների գարնանային մարզական խաղեր, ֆուտբոլ: Մարմնամարզության, լողի ստուգատեսներ հինգ տարեկանների, առաջին դասարանցիների համար: 5-6 տարեկանների «Անիվների վրա» մարզական շքերթ: «Իմացումի հրճվանք» ծրագրի սովորողների գնդակախաղերի առաջնություն, էստաֆետներ: Ավագ դպրոցի ուսումնական պլանով նախատեսված 40 կմ քայլարշավների կազմակերպում (60 արշավ), սովորողների նախաձեռնությամբ ավելի երկար քայլարշավներ (մինչև 70 կմ): Բակային ֆուտբոլի առաջնություն, «Դավիթ Գևորգյան» առաջնություն՝ ավագ դպրոցի, քոլեջի, շրջանավարտների, դասավանդողների թիմերի մասնակցությամբ: Մասնակցություն բասկետբոլի, ձեռքի գնդակի քաղաքային, ծյուդոյի հանրապետական, միջազգային, թենիսի, խճուղավազքի վարչապետի գավաթի մրցաշարերի, «Լեգենդների ֆուտբոլային հանդիպմանը» Արտաշատում, ժայռամագլցման պարապմունքների ԵՊՀ-ում: Մանկավարժական մարզական

ակումբների կազմակերպում մանկավարժական գարնանային, հունիսյան ճամբարներում:
Երաժշտության, ծեսի, պարի դպրոցում՝ կրթահամալիրի դպրոց-պարտեզների, միջին, ավագ դպրոցների, քոլեջի սովորողների ընտրությամբ դասընթացների, նախագծերի, ծեսով-համերգով ուսուցման կազմակերպում, ընդհանուր պարապմունքներ, համերգներ, այդ թվում՝ նաև ուրբաթ-համերգներ, ուսումնական ժամերգություն, «Հարավարևմտյան ֆիլհարմոնիկ»: 2025-2026 ուսումնական տարվա 12-րդ դասարանցիների «Ցտեսություն» ուսումնական մոդուլով երաժշտության-պարի նախագծերի կազմակերպում: Սովորողների, մանկավարժական աշխատողների ստեղծագործական ակումբների գործունեություն՝ երգի, պարերգի, պարի, գործիքային, այդ թվում՝ «Սեբաստացիներ» ուսուցչական, վոկալ, պատանեկան, «Թևանի», «Մանուկ խազեր» երգչախմբեր, ազգային նվագարանների «Սեբաստիո», պատանեկան «Զենիթ բենդ» վոկալ-գործիքային խմբեր, «Նռանե» դաստիարակների համույթ, «Հասկ» տարատարիք սովորողների-դասավանդողների համույթ, կինետոգրաֆիայի ակումբ, դպրոցական, դասարանական, երգչախումբ-պարի խմբեր, գործիքային-վոկալ տարատարիք նախագծային խմբեր: Լրացուցիչ կրթության դաշնամուրի, ջութակի, ֆլեյտայի, կիթառի, ազգային նվագարանների, վոկալի, պարի ուսուցում: Լրացուցիչ կրթության հաշվետու ձմեռային, գարնանային, հունիսյան համերգների, բլեյան դպրոցի «Փառատոն-համերգով ուսուցում» նախագծով ամենամսյա համերգների կազմակերպում հարավարևմտյան ֆիլհարմոնիկում: Ուսումնական ծեսերի կազմակերպում, այդ թվում՝ Սուրբծննդյան, «Կրթահամալիրում Ամանոր է», հարսանեկան, Բուն բարեկենդան, Տրնդեզ, ստուգատես-փառատոների, ստեղծագործական հավաքների, մրցաշարերի մեկնարկի և ամփոփման, ճամբարային ծեսերի կազմակերպման: Էլեկտրոնային երաժշտության ակումբի, թատրոն-ավտոբուս ակումբի շրջիկ համերգներ, ներկայացումներ կրթահամալիրի դպրոցներում, քաղաքային հարթակներում, ճամփորդական նախագծերով: Արատեսի «Դպրոց բնության գրկում» կենտրոնում կրթահամալիրի ակումբների, բենդերի համերգային ծրագիր, համերգային ակումբ-հարթակի ստեղծում Արատեսում:

Գեղարվեստի դպրոցում կրթահամալիրի դպրոցների, քոլեջի սովորողների ընտրությամբ կերպարվեստի՝ գունանկարի, գծանկարի, կոմպոզիցիայի, կերամիկայի-խեցեգործության, ճարտարապետության, մետաղի, քարի, փայտի գեղարվեստական մշակման դասընթացներ, ուսումնական նախագծեր, լրացուցիչ կրթության պարապմունքներ, հանրակրթական տեխնոլոգիական «Ձոն» ամենամյա ստուգատեսի կազմակերպում: Արվեստանոց-արհեստանոցներում, նորացված տեխնոլոգիական լաբորատորիաներում արտադրությամբ, փառատոնով, ցուցահանդես-տոնավաճառով ուսուցման նախագծեր, ցուցահանդես-հանգանակություններ դպրոց-պարտեզներում: Քանդակի մանկավարժական ակումբի գործունեություն՝ որպես տեխնոլոգիա դասավանդողների, դասվարների մասնագիտական զարգացման միջավայր: ԱրտաՍահման, Գեղարվեստի ցուցասրահներում հունվարյան, հունիսյան ճամբարային գործունեության, Ձոն ստուգատեսի, 2025-2026 ուսումնական տարվա ընտրությամբ գործունեության ամփոփիչ ցուցադրություններ: «Արատես վանական համալիրի և գյուղատեղիի վերականգնման, վերարժևորման նախագիծ» ՃՇՀԱՀ նախագծային խմբի հետ: «Կրթական պարտեզ բնակելի արվարձանում» նախագծով ճարտարապեական արվեստանոցում Երևանի թիվ 95 մանկապարտեզի բակի ճարտարապետական մոդելի ստեղծման աշխատարան՝ դասավանդողների, ավագ դպրոցի, քոլեջի սովորողների համար: Հայաստանի մարզերի մշակութային կենտրոնների հետ համագործակցության նախագծեր: «Խաղարան» ներկայացումներ կրթահամալիրի դպրոց-պարտեզներում: Գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի ուսանողների փորձառության կազմակերպում ակադեմիայի և ուսումնական կենտրոնի համատեղ նախագծով՝ կրթահամալիրում լողափնյա միջավայրի բարեկարգման նախագծերի, ճարտարապետական աշխատարանի մասնակցությամբ:

Ուսումնական ագարակում կենդանիների խնամքի, բուժման, թերապիայի շուրջտարյա նախագծեր, նոր կենդանիներ: Ձմեռային, գարնանային աշխատանքներ, ամառային գործունեության նախապատրաստում, Արատեսում ագարակի ստեղծման ուղղությամբ աշխատանքներ: Հիպոթերապիայի, ձիավարության պարապմունքներ, լրացուցիչ ուսուցման նախագծեր,

դասավանդողների ձիավարության-հիպոթերապիայի ակումբ, ուսումնական ճամբարներում (այդ թվում՝ նաև «Մուտք կրթահամալիր» ճամբարները) ագարակային գործունեության ներառում, սեբաստացիական տուրերի կազմակերում: Ուսումնական ջերմոցի գործունեություն, «Ձոն» ստուգատեսով, հանրակրթական էկոտուրով մասնակցություն ծառատունկ-թփատունկի, ծաղկաթմբերի ստեղծման, «Կանաչ օր կրթական պարտեզում» նախագծերին: Խաղողի վազերի մշակման գարնանային աշխատանք, կրթական պարտեզում խաղողի վազերի-թառմաների խնամքի մշտադիտարկում:
Դպրոց բնության գրկում. Արատեսի դպրական կենտրոնում ձմեռային, գարնանային, ամառային նախագծերի օրացույց, այդ թվում՝ ձյունե քանդակների, Սուրբծննդյան, դդմատոնի, Բարեկենդանի, հայրենագիտական, արշավախմբային, նախագծային, համագործակցային ճամբարներ: «Ուսումնական մեղվանոց». Արատեսում մեղուների ձմեռային խնամք, ձմեռանոցից դուրբերման, գարնանամուտի խնամք, մեղվապահի օրացույցով աշխատանքներ: Երկրագործական գարնանային աշխատանք՝ խոտաբույսերի, ծառերի, անտառի դիտարկում, բույսերի խնամք: Ագարակի ստեղծման նախագծում: Ամենամյա օգոստոսյան տեխնոճամբարի պատրաստություն, շուրջտարյա գործող տեխնոլաբորատորիայի ստեղծում: Բարեկամության ճամբար Վայքի նախագծային խմբի հետ: Արտանիշի վրանային ճամբարի նախապատրաստում ամառային գործունեությանը, միջավայրի բարեկարգում, հունիսի գործունեություն:

Ինժեներական կենտրոնում, սարքաշինության, ուսումնական գործիքաշինության, ՏՏ-ռոբոտաշինության, անօդաչու սարքերի լաբորատորիաներում 4-12-րդ դասարանցիների ընտրությամբ գործունեության, դասընթացների, քոլեջի ուսանողների մասնագիտական ուսուցման, լրացուցիչ կրթության, անհատական նախագծերի-ինքնակրթության կազմակերպում, խմբային-անհատական բնագիտական-տեխնիկական ստեղծագործության նախագծերի համակարգում: Ուսումնական խաղերի ստեղծման ակումբի շուրջտարյա գործունեություն: Սովորողների տեխնիկական ստեղծագործության բաց հավաք-ցուցադրություն հունվարին, մասնակցություն հանրապետական «Ռոբոտների հաքաթոնին», «Մինի սումո ռոբոտների մրցույթին»: Բնագիտության

դասավանդողները՝ դասվարների մենթորներ. բնագիտական փորձերի ուսուցում ինժեներական, բնագիտության լաբորատորիաներում: Նախագծային ներկայացումներ կրթահամալիրի SS լաբորատորիայում, նոր սարքերի փործարկումներ՝ Սարքաշինության լաբորատորիայում: Շարունակական սեմինարներ՝ ըստ դասավանդողների նշած կարիքի: Ամենամյա տեխնոճամբարի զարգացման նախագիծ: Արատեսում տեխնոճամբարի նախապատրաստում, շուրջտարյա գործող տեխնոլաբի ստեղծում: Գործընկերության հաստատում «Դրոններով մրցավազքի Հայաստանի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հետ:

Շախմատի ուսումնական կենտրոնում 1-3-րդ դասարաններում շախմատի ուսուցման մասնագիտական աջակցություն, դասվարների հետ պարապմունքներ, կրթահամալիրի դպրոց-պարտեզների, միջին դպրոցի սովորողների գարնանային, հունիսյան շախմատի մրցաշարեր, լրացուցիչ կրթության կազմակերպում: ՀՀ դպրոցականների շախմատի 20-րդ օլիմպիադայի երեք փուլի մասնակցություն:

Կրթահամալիրի հանրակրթական դպրոց-պարտեզներում, միջին դպրոցում սովորողների երկարացված օրվա ճամբարների կազմակերպում:

Լրացուցիչ կրթության լողափնյա ճամբարներ 2026թ. մայիսի 25-ից, օրացուցային գործունեություն դպրոց-պարտեզներում, երևանի դպրոցների, քաղաքում հյուր հայ և օտարերկրացի սովորողների մասնակցությամբ:

Կրթահամալիրի դասավանդողների տարատարիք սովորողների նախասիրությունների զարգացման ակումբներ՝ ռադիո-TV, գրական, բարբառախոսների, օտար լեզուներով խոսողների, քանդակի, ձեռագործի, զարդագործների, կինոսերի, մանկավարժական, մեղվապահի, էկոլոգիական, մարզական, հոգեբանի, ինտելեկտուալ խաղերի, թատրոնի, ակումբներում բաց պարապմունքներ, քննարկումներ, հանդիպումներ:

Սովորողների, դասավանդողների համար ինքնակրթության, անհատական նախագծերով լրացուցիչ կրթության ուսումնական բաց միջավայր-հարթակ հանդիսացող արվեստանոց-ուսումնաարտադրական արհեստանոց-լաբորատորիաների բաց ցանց: Սովորողների դասավանդողների ներառում արտադրական ուսուցման անընդհատ ծավալվող ծրագրերում՝ գինու, կարի և

մոդելավորման, քանդակի, խեցեգործության, մեղվապահության, այլ: Կրթահամալիրի Քոլեջի՝ որպես արտադրական ուսուցման մոդել դպրոցի գործունեության զարգացում:

Մանկավարժության կենտրոնի համակարգմամբ մանկավարժական աշխատողների շուրջտարյա ընդունելության, մասնագիտական զարգացման նախագծային բաց հարթակների գործունեություն. մանկավարժական աշխատանքի համար դիմողների ամենամսյա վերապատրաստումներ, «Մուտք կրթահամալիր» ձմեռային ճամբար: Մանկավարժական գարնանային ճամբարում հանրապետության դպրոցների 40-ից ավելի մանկավարժական աշխատողների ներառում: Մայիսյան հավաքին հանրապետության դպրոցների մանկավարժական աշխատողների, նախագծային խմբերի մասնակցություն: Ամառային ճամբարում հանրապետության, Երևանի պարտեզների դաստիարակների, նախագծային խմբերի, կամավորների, գործընկեր կազմակերպությունների ներառում:

«Արհեստական բանականությունը կրթական գործընթացում թեմայով» սեմինարներ, վերապատրաստումներ: Վիմագրական արձանագրությունների ընթերցում՝ որպես ուսումնական ճամփորդության ծրագրի բաղկացուցիչ. վերապատրաստումներ դասավանդողների, սովորողների համար: Հետազոտություն կատարելու հմտությունների զարգացման պարապմունքներ, վերապատրաստումներ դասավանդողների համար: Բլեյան դպրոցի, ծրագրում անհատական փորձի ներկայացում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում (Ծեսը հանրակրթության բաղկացուցիչ), ԵՊՀ-ում պատմություն, հասարակագիտություն դասավանդողների հանրապետական սեմինարին, «Հայաստանում խորհրդային բռնաճնշումները» գիտաժողովում, մարզական առաջնությունների, ընկերական հանդիպումների, այլ վերապատրաստումների, ստեղծագործական հավաքների ժամանակ: Մանկավարժական զարգացման բաց ակումբների ամենշաբաթյա պարապմունքներ, ակումբային նախագծեր, այդ թվում՝ երաժշտության-պարի-ծեսի, քանդակի, տեխնոլոգիական, օտար լեզուների, մարզական (վարժասարքային, թենիսի, ձիավարության), հիպոթերապիայի. դրանցում հանրապետության այլ մանկավարժական աշխատողների ներառում: Կրթահամալիրի մենթորական լաբորատորիայի անընդհատ գործունեություն:

Մանկավարժական աշխատողների ինքնազարգացմանը, առողջության պահպանմանն ուղղված նախագծեր, այդ թվում՝ մարզասարքերով պարապմունքներ: Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մասնագետների՝ առաջին բուժօգնության դասընթաց ուսումնական, հայրենագիտական ճամբարների կազմակերպիչների համար: Մանկավարժական աշխատողների հայրենագիտական ճամփորդություն-քայլարշավներ, մասնագիտական խմբերի արտագնա պարապմունքներ:

4. **Մանկավարժական նորարարության աջակցության**, **հեղինակային մանկավարժության տարածման**, **բլեյան բաց ցանցի ձևավորման գործընկերային նախագծեր**

Կրթահամալիրի զարգացման ծրագրով բլեյան բաց կրթական ցանցի նոր հանգույցների ստեղծման, բլեյան ցանցի տարածման առաջնահերթության ներկայացում Բլեյան դպրոցի 2026թ. աշխատանքների բովանդակության մեջ՝ ՀՀ ԿԳՄՍՆ հետ կնքված դրամաշնորհային պայմանագրի հավելվածում, որպես ուղղություն, ՀՀ 2027-2029 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ ԿԳՄՍ նախարարության հայտում «Աջակցություն Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին հեղինակային կրթական ծրագրերի իրականացման համար (Նորարարական մանկավարժության ծրագրերի իրականացում հանրակրթությունում)» շարունակական ծրագիրը պահպանելու, ընդարձակելու առաջարկում: 2026թ. գործողությունների ծրագիր՝ Երևանում, հանրապետության մարզերում, բլեյան դպրոցի ընդարձակման առաջարկների, նախաձեռնությունների քննարկում:

«Բլեյան դպրոց-պարտեզ Ստեփանավանում» նախաձեռնող խմբի հետ աշխատանք: Համագործակցային հանդիպումներ Ստեփանավանի թ. 3 հիմնական դպրոցում, դպրոցի աշխատողների հետ կրթահամալիրում:

Դաստիարակների լաբորատորիայում հանրապետության նախադպրոցական հաստատությունների աշխատողների եռօրյա, հնգօրյա վերապատրաստումներ: Վերապատրաստվողների մասնակցություն կրթահամալիրի խմբերի աշխատանքին: Քոլեջի նախադպրոցական կրթության 2025-2026 ուստարվա շրջանավարտների դիպլոմային աշխատանքի նախագծեր,

ուսումնասիրություններ այլ մանկապարտեզներում: Համագործակցություն Երևանի թիվ 87 և թիվ 76 մսուր-մանկապարտեզների հետ: Բլեյան դպրոցի տարածման շրջանակում մանկապարտեզների սաների ճանաչողական-ուսումնական այցեր կրթահամալիրի դպրոց-պարտեզներ, ուսումնական կենտրոններ, նախադպրոցականների զարգացնող ու ապահով միջավայրի ստեղծման նախագծերի քննարկում:

Հեղինակային նախադպրոցական կրթական ծրագրի տարածում 2-5 տարեկանների դաստիարակների բլոգների, դաստիարակների լաբորատորիայի, «Պարտեզ» ամսագրերի, սոցիալական ցանցերի, YouTube-յան ալիքի միջոցով:

Մանկավարժական նորարարության գարնանային, ամառային բաց ճամբարում բլեյան դպրոցի, դրա միջավայրի, կրթահամալիրում ստեղծված բազային կրթության դպրոց-պարտեզ մոդելի, տեխնոլոգիական հանրակրթության միջին դպրոցի, հետազոտական վարժարանի, ներառականության կազմակերպման մասնագիտական փորձի ներկայացում մանկավարժական ճամբարի մասնակից ուսուցիչներին, կրթահամալիրի փորձին ծանոթանալու նպատակով հյուրընկալված տարբեր խմբերի: Նրանց մանկավարժական նորարարության նախաձեռնությունների քննարկում՝ հանրակրթության պետական չափորոշչի ամբողջական ներդրման հնարավորությունների ներկայացմամբ: Գործընկերային նոր կապեր, որոնք լիազոր մարմնի աջակցությամբ կարող են բլեյան դպրոցի ցանցային կազմակերպման նախագծերի ծնունդ տալ:

Գործընկեր դպրոցների սովորողների, աշխատողների, խմբերի ներառում համագործակցային ճամբարային, ստուգատեսային, ժամերգության, քայլարշավի նախագծերում:

Հետազոտական վարժարանում հետազոտական աշխատանքի նախագծերի իրականացում գործընկեր դպրոցների հետ: Հետազոտական աշխատանքի փորձի ներկայացում հանրապետության դպրոցներում, մշակութային, գիտական, կրթական կազմակերպություններում:

Միջազգային փոխանակման նախագծեր: «Հայ-վրացական հանրակրթական կամուրջներ» շուրջտարյա նախագիծ՝ բանուկ կամուրջներով Ջավախք, Թբիլիսի այցելություններ, վրաստանյան խմբերի ընդունելություն,

«Վրացերենի օրեր կրթահամալիրում» ապրիլյան նախագիծ: «Շահիդ Ֆահմիդե» կրթահամալիրի խմբի ընդունելություն: Կրթամշակութային ճամբար Վիեննայում: Նորվեգիայի Օսլո քաղաքի մասնավոր գիմնազիայի սովորողների և դասավանդողների խմբի ընդունելություն, ծանոթություն հեղինակային կրթական ծրագրին, հյուրընկալության նախագծեր սովորողների ընտանիքներում, բլեյան դպրոցի հետ համագործակցության նախագծում:

Մեդիագրադարանի, «Տիգրան Հայրապետյան» գրադարանի շարունակական համալրում նոր հրատարակված գրականությամբ՝ ուսուցիչների, սովորողների հայտերի հիման վրա: Ամառային ընթերցարանների, առցանց շտեմարանների, ամառային շրջանում գրադարանի շարունակական գործունեության նախագծեր: Մեդիագրադարանից օգտվող չգրանցված (այլ դպրոցների) շահառուներ:

***Մանկավարժության լաբորատորիայի ղեկավար՝*** ***Մարգարիտ Սարգսյան***